



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 35-Ա

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ԱՐՄԻՆԵ ԹՈՒՄԱՍՅԱՆԻՆ,
ԹԱԹՈՒԼ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ, ՍԱՄՎԵԼ ԲԱԲԱՅԱՆԻՆ և ԱՐԱՐԱՏԻ ԵՎ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԱՏԱՎՈՐ ՇՈՒՇԱՆ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԿՆԻՔՆԵՐ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասը, Հանրապետության նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՆՀ-392-Ա, թիվ ՆՀ-393-Ա, թիվ ՆՀ-394-Ա և ՆՀ-395-Ա հրամանագրերը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասի 8-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 12-րդ կետով, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի հունիսի 4-ի թիվ ԲԴԽ-13-Ո-22 որոշման 3-րդ հավելվածի 1-ին կետով և 2-րդ կետի «ա» ենթակետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավորներ Արմինե Թումասյանին, Թաթուլ Ղուկասյանին, Սամվել Բաբայանին և Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Շուշան Ղազարյանին տրամադրել իրենց անվամբ կնիքներ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Վ. ՔՈԶԱՐՅԱՆ

2023թ. դեկտեմբերի 11
ք. Երևան